



1920

ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1945







076 1891.981-9 3


ДУБЛЕТ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՆ ԴՐԱԳԱՐԱՆ

**ՀԱՅ
ՄԱՆԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՊՐԱԿ 1**

**(1920—1945 թթ)
ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Կրացրեց և վերակազմեց՝ Բ. Գ. ՄԵԼՅԱՆ
Խմբագիր՝ Գ. Գ. ԱՂԱԽԱՆՅԱՆ



Ե Ր Ե Վ Ա Ն — 1988

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ АРМ. ССР
РЕСПУБЛИКАНСКАЯ ДЕТСКАЯ БИБЛИОТЕКА
ИМ. ХНКО АПЕРА
БИБЛИОГРАФИЯ СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ДЕТСКОЙ
ЛИТЕРАТУРЫ

ВЫПУСК I
Переиздание
(1920—1945 гг.)

Пересоставил: Б. Г. Мелян
Ред. Г. Г. Агаханян

ЕРЕВАН — 1988 г.

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հայ մանկական գրականության մատենագիտության անդրա-
նիկ պրակի լույս ընծայումից հետո ընկած ժամանակաշրջանում
մանկական գրականության հարցերով մեր անդադրում զբաղվել
ու անխոնջ պրպտումները հանգեցրին այն հիմնական եզրակա-
ցությանը, որ (լույս է տեսել 1972 թ.) պրակը ամբողջությամբ
և լիովին չի ընդգրկել 1920—1945 թվականների ընթացքում
լույս ընծայված հայ մանկական գրականությունը և բացթո-
ղումները զգալի ֆանակ են կազմում: Եվ խնկո Ապուր անվան
հանրապետական մանկական գրադարանի ղեկավարությունը
հանձնարարեց մեզ ձեռնամուխ լինել պրակի վերահրատարակ-
ման գործին, համալրել, վերամշակել և այն պատրաստել նոր
տպագրության:

Պրակի բացթողումների և ոչ ամբողջական լինելու պատճառ-
ներից հիմնականն այն էր, որ մանկական գրքի մատենագիտա-
կան մատենաշար լույս ընծայելու մասին որոշմամբ պրակը
պետք է ընդգրկեր միայն հայ գրողների գեղարվեստական գոր-
ծերը, մի բան, որը նիշտ համարել չէր կարելի, ֆանի որ հան-
րամատչելի գործերը հանդիսանում են մանկական գրականու-
թյան անբաժանելի մասը: Այդ իսկ պատճառով էլ մեծ թվով
գիտահանրամատչելի գրքեր դուրս են մնացել մատենագիտու-
թյունից:

Մյուս կարևոր պատճառն այն ժամանակվա մեր երկրի սո-
ցիալ-տնտեսական ծանր վիճակն էր, որը մի կողմից հնարա-
վորություն չէր տալիս ապահովելու բարձր տպաֆանակ, մյուս
կողմից այդ ժամանակ չկար տպագիր արտադրանքի հաշվառման
գրանցային կենտրոններ, իսկ Հայկական ՍՍՀՄ պետական գրա-
պալատը այդ գործը ձեռնարկել է 1925 թվականից, որը դադա-
րեցվել է Մեծ Հայրենականի տարիներին:

Դրան պետք է ավելացնել նաև այն, որ հայերեն գրքեր էին

տպագրում մեր երկրի հայաշատ վայրերում՝ Ռուսաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և նույնիսկ զավառային կենտրոններում (տես սույն պրակի հրատարակությունների վայրերի տեղանունների ցանկը):

Այդ տարիներին գիտահանրամատչելի բազմաթիվ գրքույկներ էին հրատարակում ոչ միայն հրատարակչությունները, այլև առանձին գերատեսչություններ: Այդ գրքույկները ոչ միայն չեն պահպանվել հրատարակող հիմնարկությունում, այլև չեն ուղարկվել գիտական գրադարաններին ու գրապալատին (Կենդանաբանական այգի, գիտահետազոտական առանձին ինստիտուտներ և այլն):

1917 թվականից սկսած, Մոսկվայում հայկական գործերի կոմիսարիատը նույնպես տպագրել է բազմաթիվ գրքեր: Նախաձեռնողն էր Հայաստանի խորհրդայնացումը, դրանք գաղտնի կերպով տեղափոխվել են Հայաստան: Այդ մասին է գրում նաև Վ. Անանյանն իր գործերում¹:

«Ժողովրդական լուսավորություն»² ամսագիրը տպագրել է 95 անուն մանկական ու դպրոցական ընթերցանության գրքերի ցուցակ, որոնցից մի շնչին մասը միայն հաջողվեց գտնել և գրել մատենագիտության մեջ: Յուրաքանչյուրն է հեղինակը, գրքի վերնագիրը և արժեքը: Դրանք ինքնուրույն և բարգմանական գրքեր են:

Միֆայել Զառաֆյանը և Ալեքսանդր Արարատյանը տպագրել են տասնյակ գիտահանրամատչելի գրքեր կենդանական ու բուսական աշխարհի մասին. Օրինակ՝ «Անտառ», «Բամբակ», «Բանջարանոց», «Թռչունների շուն», «Ինչ որ ցանես, այն էլ կհնձես», «Մարգագետին», «Մեղու» և այլն, բայց գիտական գրադարաններում դրանցից շատերը չեն հայտնաբերվել: Նդել են նաև գիտահետազոտական գործեր, որոնք նույնպես չեն պահպանվել Այ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանում:

Իր ժամանակին չի պահպանվել գրքի լույս ընծայմանը մասնակցած անձանց մասին տեղեկությունները, տպագիր արտա-

¹ Սովետական գրականություն, 1980, № 5, էջ 40:

² Հայ գրքի բաժանմունքներում ունեցած մանկական և դպրոցական ընթերցանության գրքերի ցուցակ. — Ժողովրդական լուսավորություն, 1928, № 2, էջ 204—207:

դրանքի թողարկման տվյալները շատ հաճախ չէր նշվում նաև թարգմանողը, կազմողը, խմբագիրը, փոխադրողը, նկարիչը և այլն: Այդ պատճառով էլ դժվար է պարզել, թե տվյալ ստեղծագործությունը կամ ծողովածուն հայ գրականության նմուշներ են, այսինքն բնագիր է, թե՞ թարգմանություն:

Մանկական գրականության մատենագիտություն կազմելու գործում առանձնահատուկ նշանակություն է ստանում նաև գիտական գրքերը գիտահանրամատչելիից զանազանելու խնդիրը: Անգամ գրքի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո էլ դժվար է հստակ որոշել տվյալ գրքի ընթերցողական հատկացվածությունը: Ներկայումս շատ գիտահանրամատչելի գրքեր, որոնցում գիտական հարցեր են արծարծվում, անգամ մատչելի են կրտսեր և միջին տարիքի ընթերցողներին:

Ներկայումս դժվար է ասել, թե նմանատիպ գրքերը այն ժամանակ որքանով էին մատչելի այդ նույն տարիքին: Սա մի այնպիսի խնդիր է, որ դարձյալ դժվարացնում է գրքերի ընտրության և մատենագիտության մեջ ընդգրկելու գործը:

Նախապատերազմյան շրջանում կատարված մի շարք թարգմանություններ լինելով բարձրարժեք՝ ընդունվել են որպես ինքնուրույն գործեր և թարգանչին իրավունք վերապահել դրանք հրատարակել առանց նշելու, թե ումից է կատարված թարգմանությունը, կամ ըստ որ հեղինակի է գրված: Նման թարգմանություններ ու փոխադրություններ են կատարել Ե. Զարենցը, Խնկո Ապերը, Հ. Հայրապետյանը, Ստ. Զորյանը և շատ ուրիշներ:

Սովետահայ մանկական գրականության ձևավորման ու զարգացման գործում մեծ դեր խաղաց գրաֆինանդատությունը: Մանկական գրքերի վերաբերյալ գրախոսականներ են գրել մեր անվանի գրողները, նպատակ ունենալով բարձրացնել այդ գրականության կարեւորությունն ու դերը: Գրախոսականներ են գրել Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Մ. Դարբինյանը, Վ. Անանյանը և շատ ուրիշներ: Մատենագիտության առաջին պրակում գրախոսությունները չէին արտացոլվել: Ներկա վերանրատարակության մեջ հնարավորին չափ տրվել են կոնկրետ տվյալ գրքի մասին եղած գրախոսականները: Ընդ որում պետք է նշել, որ այդ տարիներին լույս տեսած մանկական գրքերի զգալի մասը գրտնրվել է պարբերական մամուլի ուղադրության կենտրոնում,

գրախոսվել ու գնահատվել են ըստ արժանվույն: Այսպիսով, «Հայ մանկական գրականության մատենագիտության» մատենաշարը դառնում է նաև գրաֆննադատության կարևոր աղբյուր ու համահավաք տեղեկատու:

Վերջում կցված է այն գրքերի ու հոդվածների ցանկը, որոնցում այն ժամանակ գրականագիտական-ֆննադատական խոսք է ասվել հայ գրականության և հատկապես մանկական գրականության մասին:

Սակայն, այնուամենայնիվ, այս վերահրատարակությունը, որը հանձնվում է ընթերցողի և մատենագետի անկողմնակալ դատին, ևս լիակատար լինել չի կարող:

Բ. Մելյան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1 Աբգարյան Լ. Մարդն ու մեղուն: [Զափածո, նախադպրոցական տարիքի համար] / Նկ. Ե. Մարտիկյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 107 էջ.

2 Աբով Գևորգ. Առաջին կոմունարը: Պատմվածք: [Կրտսեր տարիքի համար].— Ե.: Հերմես, 1927.— 12 էջ.

3 Աբով Գ. Դանակը բկին: Բանաստեղծություններ: [Բարձր տարիքի համար].— Մ.: Պետհրատ, 1923.— 54 էջ:

Բ ո վ ա ն դ.՝ Մեկնիչ; Ոմանց; Իմաստը; Տերյանին; Ինքս; Հակադրություն; Երեկ, Պլակատ, էգուց.

Գ ր ա խ ո ս.

Գրիգ Գ. Դանակը բկին.— Մարտակոչ, 1923, 10 նոյեմբերի:

4 Աբով Գ. Եդինի ֆրոնտ: Քաղաքական ագիտկա: [Արձակ, միջին տարիքի համար].— Մ.: Պետհրատ, 1924.— 20 էջ.

5 Աբով Գ. Ճակատում և թիկունքում: Բանաստեղծություններ և ակնարկներ: [Բարձր տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, 1943.— 154 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Մարտիկի երգը; Մեր դրոշները; Մենք չենք մոռացել; Գարնանային; Վաղարշակը; Ապրես Սարոյան; Արշալույս; Կուտնտեսական կալում; Սուզակը.

6 Աբով Գ. Պատմվածքներ: Քաղուսգլխվարչութ. բանվորական-գյուղացիական գրադ-ն № 4: [Բարձր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1928.— 62 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Ես քո հունարին մեռնեմ; Մելիքսեթ ջան; Գուրգենանց պառավն էկոնոմիստ ա; Խմբապետը.

7 Աբովյան Խաչատուր. Զրուցարան. [Արձակ, կրտսեր տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկ-պատ. գրակ. բաժին, 1941.— 36 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Մեկ սուփրի վրա; Մեկն իր բարեկամին հարցրեց; Մեկ գիտուն մարդ մեկ կաթոլիկ եպիսկոպոսի հարցրեց; Մեկ բանաստեղծ գնաց; Մեկ քարոզաչի ժամումը քարոզ տվեց;

Մեկ մարդ մեկին խիստ հավաստի բան էր հարցնում: Թագավորի մեկը մեկ հանդիսավոր օր: Մեկ աղքատ կնիկ: Մեկ հարուստ մարդ ցխումը վեր ընկավ: Մեկ ջահել տղա: Գիտուն մարդի մեկը գնաց: Մեծն Տիգրան անվանի Թագավոր հայոց: Սրամտություն: Պարզամտություն: Ազատասիրություն: Պարսից Թագավորաց մեկը: Ալեքսանդր Մակեդոնացին: Թաղև՝ յոթն իմաստասիրաց մեկին: Էս միևնույն փիլիսոփան: Մեկ գյուղացի տեսավ: Մեկ իտալացի իշխան Փիքո անվամբ: Գյուղականն ու իր բրդիք: Մեկ անպլիացի գիտուն: Երևելի փիլիսոփան գերմանացի: 1958 թվին: Սուր պատասխան: Ժողովուրդը կամենալով: Շատախոսի մեկը: Գորտը տեսնելով մեկ մեծ հղը: Արդարամտություն: Ազնվամտություն: Ես չէի կարծում: Ստախոսն: Ճշմարտախոսն ու միամիտը: Հիմար ահ սատանիցը: Փոքր ղուշ բռնողը:

8 Աբովյան Խ. Մանկական բանաստեղծություններ, առականեր.— [Միջին տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1941.— 51 էջ.

Բ ո վ ա ն դ. Մուրադյան Հ.: Խաչատուր Աբովյան (1805—1848): Ո՛ւր եք դուք, գեղեցիկ մանկության օրեր: Ո՛վ կասի կարդալն անպետք ա մարդուս: Պատիկ երեսին թե որ շատ խաղա: Հետաքնին երեսին (որ կամի ամեն բան իմանալ): Ի վերա նոր տարվո: Մնողասեր աղջիկն է մեծահոգի մեծատունն: Առական եր՝ Մատաղ գառն: կաթնի կճուճ: Շուշաշին (ապակագործը): Սե ագռավն է հավը: Մուլ էջն ի վերա ճանապարհին: Երկու բարեկամ է արջն: Երեք խուլ միմյանց հետ հակաճառեցին: Առյուծն, աղվեսն է էջն: Կատուն է մուկը: Աղվեսն է ագռավն: Հետևանք կույր շահասիրության: Բարդին (չինարին) ու վազը: Խանը: Արտուտը իր ձագերով է երկրագործը: էջն ու ձին: Խոզն ու հղը:

9 Աբովյան Խ. Մատաղ գառն: [Զափածո, նախադպրոցական և կրտսեր տարիքի համար] Նկ. Բ. Մազմանյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1941.— 6 էջ.

10 Աբովյան Խ. Վատ ընկերը: [Զափածո, նախադպրոցական և կրտսեր տարիքի համար] Նկ. Կողովի.— Ե.: Հայպետ.րատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1941.— 8 էջ.

11 Աբրահամյան Ար. Թռուիկիս փափագը: [Զափածո, նա-

խաղալորոցական և կրտսեր տարիքի համար] Նկ. Ստ. Ալթոն-յանի, Բ. Մազմանյանի.— Եր.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1943.— 8 էջ.

12 Արուհամյան Մ. Օղաշու մայրիկը: [Արձակ, նախադարոյական տարիքի համար] Նկ. Մ. Նիկողիմոսի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1939.— 8 էջ.

13 Աթալյան Հ. Աղվեսն ու Աղասին: [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Բաքու, Ազերնեշը, 1937.— 16 էջ.

14 Ալազան Վ. Դասալիքը: Վիպակ [Միջին և բարձր տարիքի դպրոցականների համար].— Ե. Պետհրատ, 1927.— 120 էջ.— Կոմերիտական գրադ.-ն, գեղարվեստական սերիա.

15 Ալազան Վ. Թղթի և արճճի հերոսները: [Զափածո, կրտսեր տարիքի համար] Նկ. Տ. Խաչվանքյանի.— Ե.: Հայպետհրատ, 1933.— 14 էջ.

16 Ալազան Վ. Խորհուրդների համար: [Արձակ, կրտսեր տարիքի համար] Նկ. Ա. Ղարիբյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 16 էջ.

16 ա Ալազան Վ. Պոեմ գյուղի մասին: [Միջին տարիքի համար].— Թիֆլիս Մ.— Ե.: 1926.— 35 էջ.— Պրոլետ. գրողների համամիութենական ասոցիացիա (ՎԱՊՊ).

17 Անաբոն. Երկու ընկեր: [Արձակ, կրտսեր տարիքի համար] Նկ. Բ. Մազմանյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 16 էջ.

18 Անաբոն. Սահմանագլխին: [Արձակ, կրտսեր և միջին տարիքի համար] Նկ. Ահարոնի.— Ե.: Հայպետհրատ, 1942.— 28 էջ.

19 Անաբոն. Քաջ պիոները: [Արձակ, կրտսեր տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, 1931.— 11 էջ.

20 Աղաբաբ Հակոբ: Թուխսը [Զափածո, նախադպրոցական տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 18 էջ:

21 Աղաբաբ Հ. Խաղ ու երգ [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Թիֆլիս, Սախելգամի, [1930].— 62 էջ, Նկ. («Կարմիր ծիրերի» գրադարան).

Բ ո վ ա ն դ. Իմ ծաղիկները: Հոկտեմբերիկին: Կիմա (Խաղ): Հնչում է զանգը: Մայիսյան ուղի (պատիկ պոեմ): Ակտյաբրինա

Հոկտեմբերանուշ; Գյուղ ու քաղաք (մանկական խաղ); Երգ [Հոկտեմբերի՝ մուրճ ու մանգաղի մասին]; Հոկտեմբերը; Շուշաններ; Մայիսի մեկը (քայլերգ); Ամռան օրերին; Լենին (մանկական խաղ); Աշխարհի համար.

22 Աղաբաբ Հ. Մանկական երգեր [Զափածո, նախադպրոցական և կրտսեր տարիքի համար] Նկ. Գ. Բրուտյանի և Ա. Կոչոյանի.— Ե., Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկ-պատ. գրակ. բաժին, 1938.— 100 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Իմ բալիկը; Հոկտեմբերիկին; Հոկտեմբերյան ձոն; Հնչում է զանգը; Մովի պես; Իմ ծաղիկները; Շուշաններ; Պապար; Միտիկն ու Սուրիկը; Ուլիկը; Կատու; Իմ փիսիկը; Պստիկ տղան; Ժամացույցը; Ձնծաղիկ; Զա՛ն, այ լուսին; Երգ գարնան; Զրվեժ; Ամռան օրերին; Միրանի շերեփը; Պախրախոտ; Մայիս; Զև. չե ծտեր; Թուխսը; Մը՛կ ոռո՛; Օգնություն:

Գ ր ա խ ո ս.՝ Պ-ն; Ինչ կարդալ՝ Մ. Թորգոմյանի «Բնության գրկում» և Հ. Աղաբաբի «Մանկական երգեր» ժողովածուները.— Կարմիր ծիլեր, 1937, № 7, էջ 22—24:

23 Աղաբաբ Հ. Մանուկների հետ [Զափածո, նախադպրոցական և կրտսեր տարիքի համար] Նկ. Գ. Բրուտյանի.— Ե., Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկ-պատ. գրակ. բաժին, 1945.— 48 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Իմ բալիկը; Հոկտեմբերիկ; Պապար; Մա ծափ; Ձնծաղիկ; Գետը; Զրվեժ; Ամպերը; Զա՛ն, այ լուսին; Գարնանը; Շուշաններ; Իմ ծաղիկները; Պստիկ տղան; Ես թե ունեմ; Փոքրիկ տղի հրավերը; Միտիկի սերը; Միտիկների կոիվը; Միծեռնակին; Կաշաղակ; Անբան փիսոն; Ժամացույցի ճոճանակը; Իլիկը; Փարչը; Ուլ ուլիկը; Ասելուկ; Հնդկահավի երգը; Գյուղի հերոսը; Մկնիկի կյանքը; Զալ աքլորը; Նանի նվերները; Ուլիկը; Աքլորի մահը; Գող քոթոթը; Աքլորն ու լալոտը; Երեք սագ, երեք ծագ; Հարսանքավոր աղվեսը; Գոմեշն ու ուղտը.

24 Աղաբաբ Հ. Մուրճ ու մանգաղ [Զափածո պատմվածքներ կրտսեր տարիքի համար).— Թիֆլիս, 1926.— 32 էջ, նկ, ներդիր.— Մատենագիտ. 4-րդ էջում.

Բ ո վ ա ն դ.՝ Նվիրում եմ վաղեմի բարեկամ Սարգիս Խանոյանին; Հակոբ Աղաբաբ [կենսագրություն; 30-ամյակի առթիվ արտատպված «Կարմիր ծիլերի» 1925, № 12-ից]. Առաջաբանի

տեղ; Մուրճը; Մանգաղը; Մուրճն ու Մանգաղը [Առակ]. Մենք [Վերջաբանի տեղ].

25 Աղաբաբ Հ. Պախրախոտ [Զափածո, կրտսեր տարիքի համար] Նկ. Գ. Գրիգորյանի, խմբ. Ռ. Աղաբաբ— Թիֆլիս, Սախելգամի մանկապատանեկան սեկտոր, 1935,— 42 էջ:

Բ ո վ ա ն դ.՝ Պախրախոտ (Լեգենդ); Մայիս (Լեգենդ); Թուխսը (Հեքիաթ); Ծըղկոռ (Հեքիաթ); Ծտի բաղնիքը (Պատիկ պոեմ); Մայիսյան ուղի (Պատիկ պոեմ):

Գ Ր ա խ ո ս.՝ Դարբինյան Մ.— Պրոլետար, 1936, 14 հունիսի: Արձ. Մ. Դ.:

26 Աղաբաբ Հ. Օկոյաբերինա, Հոկտեմբերանուշ, Նվեր ընկեր պիոներներին. [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Թիֆլիս, 1924.— 8 էջ: Նկ.:

27 Աղաբաբ Ռուբեն: Առաջին ծաղիկները: Մանկական երգեր, [Զափածո, կրտսեր տարիքի համար]: Նկ. Արամ Կոչոյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկա-պատ. գրակ. բաժին, 1939,— 43 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Երգ նոր տարվա; Առաջին ծաղիկներ; Գարնանային շքերթ; Վտակների երգը; Մայիս ենք մենք; Մայիսյան հանդես; Ծամբարային երգ; Լազերում; Գիշերը ձորակում; Բնության գրկում; Սեպտեմբերյան երգ; Պիոներական ռազմարշավ; Փոքրիկ շինարարը; Պարաշյուտ; Մենք էլ թռչենք պարաշյուտով; Երգ կոմերիտական տոմսի մասին; Վարդագույն քար: Քայլերգ; Պատանի Պուշկինը; Նինջն ու հորանջը; Հեքիաթ; Պատիկ պոեմ:

28 Աղաբաբ Ռ. Լիրիկա ([Միջին տարիքի համար].— Թիֆլիս, 1930.— 31 էջ.— Մատենագիտ.՝ Թիֆլիսում, տպագրված 12 գրքի մասին, (Վրաստանի պրոլետ-գրողների ասոցիացիա, հայտն. № 10).

Բ ո վ ա ն դ.՝ Պրոլոգ; Սեր, Լիրիկական երգ; Լիրիկա Հոկտեմբերյան; Ուժի մասին; Երգ ռազմի; Հանգստի տունը; Քաղքենի; Երգ հին գվարդիայի մասին; Հունտեր; Պատվավոր պիոներ; Լենինը Զագէսում; Վտակների համերգը; Մայիս; Երգ մըրցակցության; Բերքի երգը:

29 Աղայան Ղազարոս. Ամիսներ [Զափածո, նախադպրոցական տարիքի համար]. (Նկ. Ա. Շահվերդյանի.— Ե., Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկա-պատ. գրակ. բաժին, 1940.— 13 էջ.

30 Աղայան Ղ. Անահիտ: Հեքիաթ միջին տարիքի համար [Արձակ, կրտսեր և միջին տարիքի համար] Խմբ. Դ. Դեմիրճյան.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1944.— 51 էջ.

31 Աղայան Ղ. Արևի ճառագայթները. [Զափածո, նախադպրոցական և կրտսեր տարիքի համար] Խնկ. Ա. Շահվերդյանի.— Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 8 էջ.

32 Աղայան Ղ. Բանաստեղծություններ [Նախադպրոցականներ համար].— Ե., Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 20 էջ.

Բ ո վ ա ն դ.: Թռչնիկներ; Աղունակ; Կաշաղակ; Ծիտիկ; Աքաղաղ; Արեգակ; Ծիտն ու բազեն; Առավոտը գյուղում; Ճախարակ; Տավարածի ճաշը; Հովվի անկողինը; Զաղացականի քունը; Պառավի հորթը; Հնձվորներ; Արև; Լուսնհաշ:

33 Աղայան Ղ. Դպրոցական երգեր: Ծննդյան 100-ամյակի առթիվ. 1840—1940. Կազմեց՝ Ազատ Մանուկյան.— Ե., 1941.— 13 էջ.

34 Աղայան Ղ. Ընտիր երկեր: [Արձակ և չափածո, կրտսեր և միջին տարիքի համար] Խնկ. Ա. Մամաջանյանի; Կազմեց՝ Մ. Դուրգարյան.— Ե., Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1939.— 297 էջ.

Բ ո վ ա ն դ.: Բանաստեղծություններ: Երկու խոսք; Կաշաղակ, Ծիտը; Աքաղաղ; Տավարածի ճաշը; Հովվի անկողինը; Առավոտը գյուղում; Արեգակ; Ծիտն ու բազեն; Զմեռ; Սերմնացան; Ճախարակ; Պառավի հորթը; Զաղացականի քունը; Արև; Գարունքի հաղթությունը; Հնձվորները; Նոր տարի; Հոնի կորիզը; Հիշողություն; Պարզամիտ հովիվը; Ուսումնարան; Մանուշակ; Լուսնհաշ; Խրատ; Զափածո գրույցներ, վիպերգեր: Տորք Անգեղը; Ցախավելի գաղտնիքը; Սոխակներ; էջ և սոխակ; Գառն ու գայլը; Նասրադին խոջան մեկ օր ունեցում: Հեֆիաթներ՝ Օձամանուկ ու Արևհատ; Եղեգնուհին; Անահիտ; Զանգի Զրանգի; Արեգնաղան կամ կախարդական աշխարհը; Գյուլնազ տուտի հեքիաթ; Ասլան բալա; Այծատուր; Վիշապին հաղթողը; Խիզախը; Հազարան բլրուկ.

35 Աղայան Ղ. Հեքիաթներ: [Արձակ և չափածո, միջին և

քարծր տարիքի համար])).— Ե.— Մ.: Հայպետհրատ, 1937.— 302 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Զորյան Ստ. Ղազարոս Աղայան [Ակնարկ Ղ. Աղային մասին], Անահիտ; Օձամանուկ և Արևհատ; Արեգնադան կամ կախարդական աշխարհ; Մանկական աշխարհայացք կամ լուս ու մութ աշխարհներ; Եղեգնուհին; Զանգի-Զրանգի; Մանուկ խան; Ասլան բալա; Գյուլնազ տատի հեքիաթը; Պախրատուր; Այծատուր; Քիչ է՛լ, քիչ է՛լ; Տորք Անգեղ;

Գ ր ա խ ո ս .՝

Իճնիկյան Աբամ Ղ. Աղայանի հեքիաթները.— Խորհրդային գրականություն, 1937, № 4, էջ 167—169.

36 Աղայան Ղ. Նվեր մանուկներին; Հեղինակի ծննդյան 100-ամյակի առթիվ [Կրտսեր և միջին տարիքի համար]. /Կազմեցին և խմբ. Աս. Ասատրյան, Վ. Անանյան; Նկ. Մ. Բաղդասարյանի.— Ե., Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1941— 98 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Ասատրյան Աս. և Անանյան Վ. Երկու խոսք փոքրիկ ընթերցողներին; Աղայանի երկերը; Հրավեր՝ հրատ; Ուսումնարան; «Անահիտ»-ից; Նոր տարի; Հոնի կորիզը; Մանկական թոթովանք; Լուսնահալ; Առավոտը գյուղում; Թռչնիկներ; Աքաղաղ; Ծիրտը և բազեն; Հիշողություն; Մանկության բարեկամներ; Արեգակ; Զորս եղանակ; Ամիսներ և շորս եղանակ; Գորունքի հաղթությունը; Մանուշակ; Ամառ; Արև; Հովվի անկողինը; Հնձվորներ; Զաղացականի ննջարանը; Տավարածի ճաշը; Պարզամիտ հովիվը; Ճախարակ; Փիղն ու շատիկը; Ցախավելի գաղանիքը; էջ և սոխակ; Գայլն ու գառը; Տորք Անգեղ; Գյուլնազ տատի թոռները; Գյուլնազ տատի հեքիաթը; Պախրատուր; Ասլան բալա; Այծատուր; Պարերգ; «Արջամուկ»-ից; Զվարճալիք;

Գ ր ա խ ո ս .՝

Արաքսամանյան Ալ., Պետյան Վ.— Բանվոր [Լենինական], 1941, 26 ապրիլի;

37 Աղասյան Վարսենիկ: Երջանիկ մանկություն. [Զափածո, նախադարձական տարիքի համար].— Բաքու, Ազերնեշր, 1938.— 51 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Գարնանային համիրգ; Մանկիկն ու փիսիկը; Աղջիկն, առուն ու Հովիկը; Տոնածառ; Նունիկն ու շնիկը; Խրատ;

Պետիկն ու Ալին; Ծիլ ենք մայիսյան տոն; Չարաձճի Մուշոն; Սիրում ենք; Հոկտեմբերիկը; Ծիտիկի խինդը:

38 Աղասյան Վ. Ծիտիկի խինդը. [Զափածո, նախադպրոցական տարիքի համար] /Նկ. Ա. Գասպարյանի.— Ե.: Պետհրատ, 1940.— 8 էջ.

39 Աղասյան Վ. Տոնածառ. [Զափածո, նախադպրոցական և կրտսեր տարիքի համար] /Նկ. Ա. Գասպարյանի, Մ. Բաղդասարյանի, Ա. Խուդավերդյանի.— Ե.: Պետհրատ, 1941.— 8 էջ.

40 Աղավնի: Աբուլգեյթ: Քրդական հեքիաթ. [Զափածո, միջին տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 32 էջ:

41 Աղավնի: Արթիկ տուֆը [Զափածո, կրտսեր տարիքի համար] /Նկ. Ս. Ռազմաճյանի.— Ե.: Պետհրատ, 1933.— 16 էջ.

42 Աղավնի: Արևածաղիկ: Ռուս. ժող. ավանդույթուն. [Զափածո, միջին տարիքի համար] /Նկ. Ս. Ալեքսանյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1937.— 12 էջ.

43 Աղավնի: Զրույց գերմանացի գեներալի և չալտիկ աքլորի մասին. [Զափածո, կրտսեր և միջին տարիքի համար]. /Նկ. Շ. Հովհաննիսյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1943.— 12 էջ.

44 Աղավնի: Կաքավաձոր. [Զափածո, կրտսեր տարիքի համար]. /Նկ. Հ. Մարտիրոսյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից գրակ. բաժին, 1937.— 20 էջ.

45 Աղավնի: Որդին. [Զափածո, միջին տարիքի համար]. /Նկ. Ս. Ալեքսանյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1942.— 12 էջ.

46 Աղավնի: Պավլիկ Մորոզով. [Զափածո, միջին տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1941.— 28 էջ.

Գրախոս.

Վառդապարյան Ռ.— Գրական թերթ, 1941, 20 նոյեմբերի: Ստորագր. Ռ.

47 Աղավնի: Պարտիզան Վասյան: [Զափածո, միջին տարիքի համար]. /Նկ. Վ. Վարդանյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1942.— 12 էջ.

48 Աղավնի: Վանկա ոսկեձեռիկը: [Զափածո, կրտսեր տա-

քիթի համար]. Նկ. Վ. Սուրյանինովի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1943.— 20 էջ.

49 Աղավնի: Ֆրունզեի տղան Թիմուրը: [Զափածո, միջին տարիքի համար]. Նկ. Գ. Բրուտյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1943.— 20 էջ.

50 Աճեմյան Զ. Օհանյան Ս. Կարմիր բանակի քսանամյակին. 1918—1938. [Զափածո, արձակ, միջին և բարձր տարիքի համար]. Կազմ. Զ. Աճեմյան, Ս. Օհանյան.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵ ՄԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 64 էջ, նկ. և լուսանկ.

Բ ո վ ա ն դ. Նկ. Վ. Ի. Լենին; Լենին հսկան [Փոխադրություն ժողովրդական պոեմ «Լենին փաշայի»: Փոխադր. Սարմենի]; Նկ. Ի. Վ. Ստալին; Զարյան Ն. Ստալին; Սադոֆե Իլյա: Երգ հայրենիքի մասին. Թարգմ. Մ. Դուրգարյանի,

51 Ամեռ (Աբր. Գալեյան): Հրետանի: Պոեմկոչ: Զ-րդ տպագր. [Զափածո, միջին տարիքի համար].— Մ.: «Մուրճ ու մանգաղ» հրատ., 1924— 16 էջ մատենագիտ. 24 գրքի մասին: Արտատպված է «Քուրա» ամսագրից և վերամշակված.

52 Այգեկցի Վարդան: Աղվեսագիրք: Առակներ ԺԳ դարի: [Արձակ, միջին և բարձր տարիքի համար]. Նկ. Հ. Կոչոյանի.— Ե.: Պետհրատ, 1935.— 118 էջ.

Բ ո վ ա ն դ. Գարու հաշիվը; Այրի կին և որդի; Միայնակյաց և գամփռ շուն; Առյուծ և աղվես; Իմաստուն դատավոր; Առյուծ և գայլ և աղվես; Դինի; Իմաստուն ավազ էջ; Միամիտ գողեր; Եղեգն ու ծառերը; Իշխան և այրի կին; Իմաստուն զինվոր; Թագավոր և օձ; Առյուծ և աղվես և արջ; Կաթ, մեղր պատճառ պատերազմի; Կտակ վասն գանձի; Ուղտ և գայլ և աղվես; Կռունկ՝ թագավոր թռչունների և էջ; Եզն ու ձի; Հիմար և ձմերուկ; էշին թոռ ծնվեց; Աղքատ և ավետարան; Հայր ու որդի; Մարդ և ընկույզ և ձմերուկ; Եկեղեցի և ջրաղաց; Ամենագետ մարդ; Աղվես և որսորդ; Իշխանավոր և իմաստուն; Աղվես և թղթատար գայլը; Այրի կին և խորթ որդի; Հալալ մարդ; Մուկ և ուղտ; Արվեստ կնոջ; Գայլ և աղվես և ջորի; Գող քահանա և այրի կին; Անդգամ կին; Դրախտ և գեղջուկ մարդ; Մանոթություններ:

53 Այգեկցի Վ. Առյուծը, աղվեսն ու արջը [Արձակ, առակ, ևրտսեր տարիքի համար]. Նկ. Ա. Շահվերդյանի.— Ե.: Հայ-

պետհրատ, ՀՀԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 8 էջ.

54 Անանյան Վախրանգ. Դալի թափա: Ճանապարհորդական տպավորություններ [Միջին տարիքի համար]. Խմբ. Ն. Դաբաղյան.— Ե.: Գյուղհրատ, 1934.— 82 էջ.

Բ ո վ ա ն դ. Դալի թափա: Դարավոր անապատը՝ սբանչելի մի այգի: Ֆանտաստիկ Բասսեյանը: Կոլխոզնիկ տատը Բաիրովի ամառանոցում:

55 Անանյան Վ. Դժոխքի դռան գաղտնիքը: Արկածային վիպակ [Միջին և բարձր տարիքի համար]. Խմբ. Հ. Մկրտչյան: Նկ. Շավ. Հովհաննիսյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀՀԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1945.— 161 էջ.

Գ Ր Ա Խ Ո Ս.

Այվազյան Խ.— Գրական թերթ, 1946. 10 փետրվարի.

Կարինյան Արտ.— Ավանգարդ, 1946. 3 մարտի.

56 Անանյան Վ. Զորաշարժ: Տպավորություններ Հայկական հրաձգային դիվիզիայի 1928 թվի զորաշարժերից. [Արձակ, միջին և բարձր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1931.— 44 էջ.

57 Անանյան Վ. Կրակե օղակի մեջ: Վեպ Հայաստանի քաղաքացիական կռիվներից [Բարձր տարիքի համար]. Շապիկը և Նկ. Արարատ Ղարիբջանի.— Ե., Պետհրատ, 1930.— 280 էջ.

Գ Ր Ա Խ Ո Ս.

«Կրակե օղակի մեջ».— Գրական դիրքերում, 1931, № 7, էջ 48—50: Ստորագր. Ն. Ն.

58 Անանյան Վ. Մանիշկազույն բարձունքներում: Ժողովածու [Արձակ, բարձր տարիքի համար].— Ե.: Գյուղհրատ, 1935.— 80 էջ.

Բ ո վ ա ն դ. Մանիշկազույն բարձունքներում: (Տպավորություններ Բավրա գյուղի կոլտնտեսության դաշտերից): Նորից ծանոթ խնձորենու վրա: (Մանկական հուշ Դիլիջանի «Կնյազի բաղի» և իր ընկերուհի Վարդի մասին): «Քամակին վակզալ կա» (Եղեգնաձորի Մալիշկա գյուղի մասին):

59 Անանյան Վ. Ոչ մի գայլ մեր հանդերում: [Արձակ, բարձր տարիքի համար]. Պատանի որսորդի հուշատետրից.— Ե.: Պետհրատ, 1930.— 23 էջ: Գունավոր նկ.

60 Անանյան Վ. Որս: [Բարձր տարիքի համար]. Խմբ. Արամ

Հայրյան; նկ. Շավ. Հովհանիսյանի.— Ե.: Պետհրատ, 1934.— 242 էջ. 1 թերթ նկ. գործ Հովհ. Շավարշի: Սուպեր շապիկի վրա հրատ. տարեթիվը գրված է 1935 թ.:

15489 II
Բ ո վ ա ն դ.՝ Այն մասին թե ինչու եմ սիրում որսորդությունը և ինչպես որսորդ դարձա; Սառնորակ ջրերում՝ կարմրախայտի հետևից; «Ոչ մի գայլ մեր հանդերում»; Եղջերու; Տանջալի հայացքը; Թե ոնց Գրիգորին «պարզերես» արին; «Կամա՛ց» աչքին կիսիես; Թարմ հտքերով; Մայր արջի վրեժը; Վիրավոր արջը; Արջի ճանկերում; Հավատարիմ ընկերս; Իմ որսորդական օրագրից; Մի դեպք դեղին եղեգնուտներում; Աղավնիները; Մեր օրերի սուտիկ որսկանը; Երկու խոսք մեր որսատեղի և այծյամի մասին; Դիվային կածաններով; Կախարդական լուսաբացը; Մի գիշեր սարում՝ բոցկտող խարույկի առաջ; Կարմիր լեռների «ճերմակ դիրեկտորը»:

Գ Ր Ա Խ Ո Ս.՝

«Որս».— Գրական թերթ, 1935, 11 հուլիսի. Ստորագր. Ե. Թ.

61 Անանյան Վ. Պատկերներ կոլխոզային դաշտերից; Ճամփորդական նոթեր [Միջին և բարձր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1931.— 96 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Վաղակաշկան; Հաղթված անապատը; Վարպետ Սամսոնն էլ եկավ (Հոկտեմբերյանի շրջանի նոր Արտագես գյուղում կոլտնտեսություն ստեղծելու մասին); Արտերի ծովը; Այլը գյուղն ու անապատը; Սովթանբեգ; Նորից ծանոթ խնձորենու վրա; Վեց տարի հետո; Արյունոտ տոմսը:

Գ Ր Ա Խ Ո Ս.՝

Դանիելյան Ս.— Գրական դիրքերում, 1931, № 8, էջ 71—72:


62 Անանյան Վ. Քարանձավի բնակիչները: Վիպակ [Բարձր տարիքի համար]. Խմբ. Ռ. Աթայան.— Ե.: Պետհրատ, 1936.— 376 էջ.

Գ Ր Ա Խ Ո Ս.՝

Հովսեփյան Վ.— Գրական թերթ, 1940, 30 նոյեմբ. № 32:

63 Անտունի [Վահան Տեր-Առաքելյան]. Գրազ կամ շան թաղումը: Պոեմատիրա [Զափածո, միջին և բարձր տարիքի համար].— Թիֆլիս, Սախելգամի, 1931.— 32 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Օնիկի գրազը; Տեր Կարոյի հուշերն ու փշերը; Տեր Կարոն սակարկում; Առաջնորդի ագենտը; Առաջնորդի ցասումը:



Հակակրոնական պոեմ ընդդեմ քահանաների որկրամոլության, որոնք ոչ մի բանից չեն խորշում և հանուն դրամի՝ շանը մարդավարի թաղում են անում:

64 Անտունի: Դեպի նոր կյանք: Պատմվածք. [Միջին և բարձր տարիքի համար].— Թիֆլիս, «Զակկնիգա», 1930.— 48 էջ:

Բ ո վ ա ն դ.: Առաջաբանի փոխարեն: Հեռու անցյալում: Նորից դատաստանը: Գյուղի գարնանամուտը:

65 Անտունի: Կարմիր դրոշ: (Պատմական լեգենդ). [Արձակ, միջին և բարձր տարիքի համար].— Թիֆլիս, Տպարան պոլիգրաֆպրոցի, 1926.— 16 էջ. Մատենագիտ. տպագրվող գրքերի մասին:

Բ ո վ ա ն դ.: Ֆրանսիայի Լիոն քաղաքում 1750-ական թվականներին մանուֆակտուրայի գործարանի բանվոր Շառլը իր տնտեսական ծանր վիճակի մասին բողոքելիս ընդհարվում է Գործարանատեր զր Կոնտը դանակահարում և սպանում է նրան: Այդ պատճառով բանվորները հարձակվում են Դը Կոնտի սպիտակ ներկված պալատի [բնակարանի] վրա և սպանում գործարանատիրոջը: Շառլին հուղարկավորելիս նրա արյամբ ներկված շապիկը դարձնում են դրոշ: Այստեղից էլ առաջացել է «Կարմիրներ» և «Սպիտակներ» դասակարգերի անվանումը: Եվ առաջիններից պայքարի այդ դրոշը մինչև հիմա էլ դարձել է բանվոր դասակարգի խորհրդանշանը:

66 Անտունի: Կաթնաղբյուր: Պատմվածք. [Միջին տարիքի համար]. /Պատ. խմբ. Կ. Ազրոյան.— Թիֆլիս, «Պրոլետար» օրաթերթի հրատ., 1936.— 21 էջ: Շապկի առաջին էջի վրա հեղինակի նկարը: «Պրոլետարի» գեղարվեստական քաղաքական մասսայական գրա-ն № 11:

67 Աշակերտի և պատկոմի հուշատետր: [Արձակ, կրտսեր և միջին տարիքի համար].— Թիֆլիս, Պոլիգրաֆտրեստի 4-րդ տպարան, 1927.— 8 էջ. (Թիֆլիսի առողջապահական սանիտ-լուսավորական ենթաբաժին):

67 ա Աշվիալ (Փալանջյան Աշոտ): Առաջնորդի մոտ. [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1935.— 5 էջ:

68 Աշվիալ: Երեք առակ. [Զափածո, միջին տարիքի համար]. /Նկ. Բ. Մազմանյանի.— Ե.: Հայպետհրատ, 1941.— 16 էջ.

Բ ո Վ ա ն դ.՝ Կատվի ձագն ու առյուծը: Գայլի դատը: Ուղտն ու շախկալը.

68 ա Աշփալ: Տոնածառը անտառում. [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1930.— 8 էջ:

69 Աշփալ: Ճամբարում. [Զափածո, միջին տարիքի համար].— Նկ. Շ. Հովհաննիսյանի.— Ե.: Պետհրատ, 1931.— 9 էջ:

70 Առուստամյան Ա. Մանկական ոտանավորներ. [Նախադպրոցական և կրտսեր տարիքի համար].— Նկ. Զ. Ալթունյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 16 էջ:

Բ ո Վ ա ն դ.՝ Լենինի նկարը; Առաջնորդին; Կարմիր բանակի տոնին; Հրաշիկի նամակը; Տրամվայը; Ավտոն; Սառույցը; Տոնածառ; Առաջին ծաղիկը; Հեյ ջան, հեյ ջան...; Միտիկները; Ուլիկը; Գազանանոցում; Մուկիկը:

71 Ավագյան Փաշո: Մեր կոխոզի մեղվանոցը [Արձակ, կրտսեր տարիքի համար].— Նկ. Հր. Ստեփանյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1939.— 18 էջ:

72 Ավագյան Փ. Միամիտ այծերը [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Նկ. Ա. Խուդավերդյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 12 էջ:

73 Ավչյան Սուրեն: Արհեստ և արվեստ: Նկարիչ ցինկոգրաֆ Ս. Սողոմոնյանի կյանքն ու գործունեությունը: (Մոնոգրաֆիա): [Բարձր տարիքի համար].— Թիֆլիս, 1930.— 36 էջ: Նկ. և լուսանկարներ:

74 Ավչյան Ս. Լիանա: (Մանկական պատմվածք). [Կրտսեր տարիքի համար].— Նկ. Ն. Զաքինյանի: Խմբ. Ա. Սարգսյան:— Ե., Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 16 էջ:

75 Ավչյան Ս. Մի թռուցիկ մանուկներին: Հակոբ Աղաբաբ: 1875—1926 թթ.: Մահվան տարեդարձի առթիվ: [Արձակ, նախադպրոցական տարիքի համար]:— Թիֆլիս, 4-րդ տպարան, 1927.— 2 էջ. Տխողոսաթերթի վրա Հ. Աղաբաբի նկարը:

76 Աուրպետ: Տժվժիկ [Արձակ, միջին տարիքի համար].— Նկ. Հովհ. Շավարշի:— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 17 էջ:

77 Աբազի Մովսես. Անբախտ որսկանները: [Արձակ, կրտսեր

տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1937.— 12 էջ.

78 Արագի Մ. Արձակ պոեմներ: [Արձակ, միջին և բարձր տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1941.— 78 էջ:

Բ ո վ ա ն դ.: Արյունոտ ծաղիկներ: Արև, Վիրավոր թռչունը; Կիսատ տունը; Արյունոտ ծաղիկներ; Կարմիր համբույրը; Հեքիաթը; Վերջին տերևը; Անցավորներ՝ Անցյալի նիրհը; Անցավորը; Հին ժամացույցը; Կոմունարները՝ Ուղակում եմ ձեզ այս գլուխը; Վերջին բարիկազը; Անմահը; Կարմիր հերոսուհին; Կարաի հրգը; Արևելյան մոտիվներ՝ Խալիլյայի երգը; Արծաթի տակ; Դուշմանի երգը; Սովետական առավուր՝ Սովետական առավուր; Կամուրջը; Կոմերիտուհին:

79 Արագի Մ. Երեք քաջեր [Արձակ, կրտսեր տարիքի համար] /Նկ. Գ- Բրուտյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1942, 15 էջ.

80 Արագի Մ. Կարմիր Կարոն: Պատմվածք [Կրտսեր տարիքի համար] /Նկ. Հովհ. Շավարշի.— Ե.: Պետհրատ, 1931.— 16 էջ:

Գ Ր Ա Խ Ո Ս.

Դարբինյան Մ.— Պրոլետար, 1932. 16 մայիսի.

Ճ Օ ա Արագի Մ. Հայրենիքի կանչը [Արձակ, միջին տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1942.— 37 էջ.

81 Արագի Մ. Հերոս Կարենը: Պատմվածք. [Կրտսեր տարիքի համար]. Ե.: Պետհրատ, 1935.— 16 էջ.

82 Արագի Մ. Մանկական պատմվածքներ. [Կրտսեր և միջին տարիքի համար] .— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 107 էջ.

Բ ո վ ա ն դ.: Կարմիր Կարոն; Պիոներ Սարոն; Փոքրիկ շինարարները; Հերոս Կարենը; Ա՛յ, թե թրմփաց...; Լևոնի ուլիկը; Բանվոր Պետիկը; Ես հեղափոխական եմ; Քաջ պահակը; Ուրախ գարունը; Ինչպես ես տեսա Լենինին; Փոքրիկ կոմունարը:

Գ Ր Ա Խ Ո Ս.

Կորյուն. Մ. Արագու մանկական պատմվածքները.— Իրական թերթ, 1941. 20 հունվ., № 3:

83 Արագի Մ. Միշիկը: Պատմվածք [Կրտսեր տարիքի հա-

մար]։ /Նկ. Ս. Այվազյանի.— Ե.։ Հայպետհրատ, 2146Մ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 12 էջ։

84 Արագի Մ. Նոր թևերով։ Լուսնի շողերով։ Զրվեժի ցուրեբրում։ (Պատմվածքներ)։ [Բարձր տարիքի համար]։— Ե.։ Պետհրատ, 1935.— 276 էջ։ /Պետհրատի էժանագին գրադ-ն № 70—71)։

Գրախոս։

Մ. Արագու «Արձակ պոեմները»։— Խորհրդային գրականություն, 1936. № 3—4, էջ 225—226.— Ստորագր. Ի. Ա.։

Շահեն Ա.— Դրական թերթ, 1938, 26 մարտի, № 12։

85 Արագի Մ. Պատմվածքներ։— [Միջին և բարձր տարիքի համար]։— Թիֆլիս, Խորհրդային Վրաստանի գրողների ասոցացիայի հայկական սեկցիա, 1923.— 46 էջ, 1 ներդիր նկ.— («Դարբնոց» ամսագրի հրատ. № 1)։

Բովանդ.՝ Խորհրդային Վրաստանի պրոլետգրողների ասոցացիայի հայսեկի կողմից։ Կիսատ տունը։ Արևը։ Վերավոր թռչունը։ Արյունոտ ծաղիկներ։ Կարմիր համբույրը։ Թևերը։ Ավերակները։ Անցյալի նիւրը։ Անցավորը։ Կարմիր հերոսուհին։ Ուղարկում եմ քեզ այս գլուխը։ Վերջին բարիկադը։ Անմահը։

85 ա Արագի Մ. Պատմվածքներ. [Միջին տարիքի համար]։— Բաքու, 1928.— 32 էջ։

Բովանդ.՝ Արևը։ Արյունոտ ծաղիկներ։

86 Արագի Մ. Պիոներ Սարոն։ Պատմվածք. [Կրտսեր տարիքի համար]։ /Նկ. Ս. Ալեքսանյանի.— Ե.։ Պետհրատ, 1931.— 12 էջ։

86 ա Արագի Մ. Տրակտոր. [Արձակ, միջին տարիքի համար]։— Ե.։ Պետհրատ, 1926.— 24 էջ։

87 Արագի Մ. Փոքրիկ հերոսը։ Պատմվածք. [Կրտսեր տարիքի համար]։ /Շապիկը Հ. Ռուխկյանի։ Նկ. Վ. Գայֆեճյանի.— Ե.։ Հայպետհրատ, 1937.— 8 էջ։

88 Արագի Մ. Փոքրիկ շինարարներ։ Պատմվածք [Կրտսեր տարիքի համար]։ /Նկ. Բ. Մազմանյանի.— Ե.։ Պետհրատ, 1931.— 20 էջ։

89 Արարատյան Ալեքսանդր։ Անտառայգիներ. [Արձակ, միջին և բարձր տարիքի համար]։ /Խմբ. Ա. Մ. Վերմիշյան.— Ե.։ Արմֆառի հրատ., 1942.— 35 էջ։ (ՍՍՌՄ ԳԱ Հայկ. Ֆիլիալի բու-

սաբանական ինստիտուտի բնագիտական գիտահանրամատչելի-
մատենաշար)。¹

90 Արաբատյան Ալ. Հերբարիում. [Արձակ, միջին և բարձր
տարիքի համար]. [Խմբ. պրոֆ. Պ. Քալանթարյան և ղոցենտ
Գ. Աղաջանյան.— Ե.: Գյուղհրատ, 1936.— 49 էջ: (ՀՍԽՀ գյու-
ղատնտեսական ինստիտուտի բուսաբանության ամբիոն).

91 Արաբատյան Աղատության հրթիռներ: Պատմվածքներ [Ար-
ձակ, միջին և բարձր տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ,
1945.— 100 էջ. նկ.:

Բ ո վ ա ն դ.՝ Քույր Կլավան; Ուկրաինացին; Երգում; Զուլի-
նե; Քաղղեկը; Պատիվը; Դրոշակակիրը; Լուսյա; Ուսանողուհին
Գ Ր ա խ ո ս.՝

Շողենց Յ.— Գրական թերթ, 1945, 20 մարտի. № 11:

92 Արաբատյան Ալվանը; Նարգոն; (Հրահանգչուհու պատմա-
ծից). [Արձակ, բարձր տարիքի համար].— Ե.: Պետհրատ,
1928.— 125 էջ. (Քաղղուսգլխավարչութ. բան-գյուղ. գեղարվեստա-
կան գրադ-ն):

Գ Ր ա խ ո ս.՝

Ալվանը; Նարգոն.— Գրական դիրքերում, 1929, № 1, էջ 49—
51: Անստորագիր:

Դարբինյան Մ.— Գրական դիրքերում, 1929, № 1, էջ 49—51:
Վանանդեցի Գ.— Գրական դիրքերում, 1928, № 3, էջ 16—21:

93 Արաբատյան Ամենակրտսեբը [Արձակ, կրտսեբ տարիքի հա-
մար]. [Նկ. Բ. Մազմանյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից
մանկապատ. գրակ. բաժին, 1944.— 66 էջ.

Գ Ր ա խ ո ս.՝

— Գրական թերթ, 1945, 20 փետրվ. № 7: Անստորագիր.

94 Արաբատյան Երեք պատմվածք. [Միջին և բարձր տարիքի
համար].— Մոսկվա—Թիֆլիս—Երևան, ՎԱՊՊ-ի հայկ. բաժին,
1926.— 23 էջ: Շապկի վրա հեղինակի դիմանկարը (Պրոլետ-
գրողների համամիութենական ասոցացիա— ՎԱՊՊ):

Բ ո վ ա ն դ.՝ Կոմսոմոլ; Պայքարող Մարոն; Տասն օր արձա-
կուրդում;

¹ Այս մատենաշարով բազմաթիվ (մոտ Լրկու տասնյակ) գիտահան-
րամատչելի գրքույկներ են տպագրվել, բայց մենք լիակատար չենք հայտնա-
բերել (Բ. Մ.):

95 Արաֆս: Զիմմի [Միջին տարիքի համար] (Նովեմբր) /համբ. Եղ. Զարենց.— Ե., Պետհրատ, 1931.— 153 էջ.

Գրախոս.

Սարյան Գուրգեն.— Երիտասարդ բոլշևիկ, 1931, № 10, էջ 44—45:

96 Արաֆս: Լաուրիկի արկածները. [Արձակ, կրտսեր տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1941.— 119 էջ.

Բովանդ.՝ Պատմվածքներ՝ Լաուրիկի բժիշկը; Լաուրիկի պարաշյուտը; Բերգաչի որդին; Ցուցարարի տղան; Ինչպես ուղղղվեց; Մարուսիկը ջութակահար; Հոկտեմբերիկի ծիտիկն ու չինացի Տոտոն; Մայրիկն ու էմիլը; Հեֆիաթներ՝ Անհաղթ Հրաժինի հեքիաթը; Հրաշք աստղի և հրաշք քաղաքի հեքիաթը; Խելոք և խելառ եղբայրները; Գաբոյի գյուղը; Ոսպնիկն ու թագավորը:

97 Արաֆս: Լիպո: Վիպակ: [Միջին և բարձր տարիքի համար] /Նկ. Ա. Ալեքսանյանի.— Ե.: Հայպետհրատ, 1942.— 104 էջ.

Գրախոս.

Կարինյան Արտ. Սովետ. դպրոց, 1942, 30 հոկտեմբ.

Ռշտունի Հեկտոր.— Սովետ. գրականություն, 1942, № 2, էջ 107—108.

— Կոմունիստ, (Ռուս. Երեան), 1942, 4 փետրվարի, № 29:

98 Արաֆս: Ծաղկածորցի Թաթիկը [Արձակ, կրտսեր տարիքի համար] /Նկ. Հովհ. Շավարշի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1939.— 54 էջ.

99 Արաֆս: Կարմիր ծաղիկներ [Արձակ, կրտսեր և միջին տարիքի համար] /Նկ. Գ. Բրուտյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1945.— 44 էջ.

Բովանդ.՝ Կարմիր ծաղիկներ; Հրդեհաձիգ աղջիկը; Այցեչուֆյուն.

100 Արաֆս: Հրաշալի սավառնակը [Արձակ, կրտսեր տարիքի համար] /Նկ. Մ. Բաղդասարյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1937.— 10 էջ.

Գրախոս.

— Գրական թերթ, 1938. 25 ապրիլի, № 16: Անստորագիր.

101 Արաֆս: Պատմվածքներ [Բարձր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1926.— 39 էջ. Հայաստանի պրոլետգրողների ասոցացիայի գրադ.-ն № 1),

Բ ո վ ա ն դ.՝ Երգիչ Հարոն, Կոմսոմոլ; Պայքարող Մարոն, Տասն օր օտպուսկում; Նոր հորիզոն.

Գ Ր ա խ ո ս.՝

— Նորք, 1926, № 1, էջ 264—265: Անստորագիր:

102 Արախ: Մանկական պատմվածքների [Կրտսեր տարիքի համար]. /Նկ. Մ. Բաղդասարյանի.— Ե.: Պետհրատ, ՀՀԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1937.— 48 էջ:

Բ ո վ ա ն դ.՝ Ո՞վ է Հաննը; Դորան ղեկավար; Առաջին ծաղիկները; Ինչ պատմեցին երեխաները; Պետոն հաղթող էր; Շվիկ-շվիկ; Արեածաղիկները; Պարավոզն ու լին մանուկները; Միտինգ Միմի:

Գ Ր ա խ ո ս.՝

Շողենց Ցական.— Հայաստանի աշխատավորուհի, 1937, № 8, էջ 24—25.

103 Արախ: Նոնակակիր աղջիկը [Արձակ, կրտսեր և միջին տարիքի համար]. /Նկ. Ան. Գասպարյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀՀԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1942.— 52 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Նոնակակիր աղջիկը; Պատանի հայրենասերը; Պատանի պարտիզանը; Անտառի տղան.

Գ Ր ա խ ո ս.՝

Այվազյան Խ.— Սովետ. գրականություն, 1942, № 9—10, էջ 141—142.

Դուրգարյան Մ.— Սովետ. դպրոց, 1943, 20 հունվարի, № 3:

104 Արախ: Տափաստանի առյուծը [Արձակ, միջին տարիքի համար] /Շապիկը և գլխազարդերը Ա. Սարգսյանի.— Ե.: Հայպետհրատ, 1942.— 64 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Ուղեկալի լվացարարուհին; Քույր Կլավան; Տափաստանի առյուծը; Երեք ուսուցչուհի; Անընկճելին; Արեւիքի արծիվը; Ծերունին:

Գ Ր ա խ ո ս.՝

Այվազյան Խ.— Սովետ. գրականություն, 1943, № 1, էջ 103—105:

105 Արմեն Մկրտիչ: Առաջին պատկոմները (Պատանեկան վեպ.) [Միջին և բարձր տարիքի համար].— Մ.: Պետհրատ, 1935.— 171 էջ.

106 Արմեն Մ. Երրորդ միլիցիոները [Արձակ, կրտսեր տա-

րիբի համար]. /Նկ. Մ. Բաղդասարյանի.— Ե.: Պետհրատ, 1937.— 12 էջ.

107 Արմեն Մ. Կինո. [Արձակ, կրտսեր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1932.— 10 էջ:

108 Արմեն Մ. Հիանալի սերմեր [Արձակ, կրտսեր տարիքի համար]. /Նկ. Մ. Բաղդասարյանի.— Ե.: Պետհրատ, 1934.— 11 էջ:

109 Արմեն Մ. Սկսում եմ 89: Վիպակ [Միջին և բարձր տարիքի համար]. /Նկ. Շ. Հովհաննիսյանի.— Մ.: Պետհրատ, 1933.— 230 էջ.

110 Արմեն Մ. Սկսում եմ 89: Զ-րդ հրատ.: Վիպակ. [Միջին և բարձր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1937.— 311 էջ.

111 Արմեն Մ. Ուրախ օր [Արձակ, կրտսեր տարիքի համար]. /Նկ. Մ. Բաղդասարյանի.— Ե.: Պետհրատ, 1936.— 8 էջ:

111 ա Արշարունի Արշավիր. Լենին (Պոեմ). [Կրտսեր տարիքի համար].— Ալեքսոլ, 1921.— 16 էջ.

111 բ Արշարունի Արշ. Կարմիր հաղթանակ. [Կրտսեր և միջին տարիքի համար].— Ալեքսոլ, Գավկոմի հրատ., 1921.— 44 էջ.

111 գ Արշարունի Արշ. Վաղվա օրը (Պոեմ). [Կրտսեր տարիքի համար].— Սիմֆերոպոլ, Հրատ. Կ. Մ. Ղրիմի շրջանի կոմ., 1921— 13 էջ.

112 Արտյոմ Գիո: Շիրաջխանի Դարչոն: (Վիպակ). [Միջին և բարձր տարիքի համար].— Ե.: Պետհրատ, 1925,— 75 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Թիֆլիսի տպարաններից մեկում աշխատող բանվորների հեղափոխական գործունեության մասին:

113 Բաղալյան Հայկ Սիմոնի: Արեգակի և լուսնի խավարումները [Միջին և բարձր տարիքի համար]. /Խմբ. Բ. Մարգարյան.— Ե.: Արմֆան, 1941.— 78 էջ. (Երևանի աստղագիտարան, գիտա-մասսայական մատենաշար):

114 Բաղալյան Հ. Ս.: Գիսավոր աստղեր [Բարձր տարիքի դպրոցականների համար]. /Խմբ. Վ. Համբարձումյան, Նկ. Բ. Մալմանյանի.— Ե.: Հայպետհրատ, 1945.— 88 էջ. -(Գիտա-մասսայական գրադ-ն):

Բ ո վ ա ն դ.՝ Ընհանուր ակնարկներ գիսավոր աստղերի մասին: Գիսավոր աստղերի շարժումները: Գիսավոր աստղերի կազմությունը և տեսքը: Գիսավոր աստղերի խտությունը և բա-

ղաղրությունը; Հալլեյի գիսավոր աստղը; Էնկեի գիսավոր աստղը; Բրուքսի գիսավոր աստղը; Մի քանի այլ նշանավոր գիսավոր աստղերի մասին; Գիսավոր աստղերի երկնային մարմինների հետ ընդհարվելու մասին; Գիսավոր աստղերի և «վայր ընկնող աստղերի» (մետեորների) կապը; «վայր ընկնող աստղեր» (մետեորներ); Երկնաքարեր.

115 Բաղալյան Հ. Ս.: Ինչպես են առաջանում արևի և լուսնի խավարումները [Արձակ, միջին և բարձր տարիքի համար]. Պատ. խմբ. Բ. Մարգարյան.— Ե.: Հայպետհրատ, 1944.— 76 էջ: Տպք. 6000, գ. 2ռ.

Բ ո վ ա ն դ.՝ Ընդհանուր գաղափար խավարումների մասին; Արեգակի խավարում; Արեգակի լրիվ խավարում; Արեգակի մասնակի խավարում; Լուսնի խավարում; Արեգակի խավարումը դիտելու նշանակությունը; Սարոս; Խավարումների հետ կապված սնահավատություններ.

116 Բաղալյան Հ. Ս.: Ինչպես որոշել քանի օրական է լուսինը [Արձակ, բարձր տարիքի համար]. Պատ. խմբ. Բ. Մարգարյան.— Ե.: Արմֆան, 1943.— 37 էջ. (Երևանի աստղադիտարան, բնագիտական գիտահանրամատչելի մատենաշար):

117 Բանաստեղծություններ: (Տարվա շորս եղանակներ: Ժողովրդական [Կրտսեր և միջին տարիքի համար]. Կազմեց Ա. Հայրյան; նկ. Գ. Բրուտյանի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 82 էջ:

Բ ո վ ա ն դ.՝ Աղայան Ղ.: Չորս եղանակ; Պուշկին Ա., Ձմեռվա իրիկունը. (Թարգմ. Հովհ. Թումանյանի); Թումանյան Հովհ. Առաջին ձյունը; Մի բաց նամակ ամենքին; Ծաղիկներ« Նեկ-րասով Ն. Փոքրիկ գյուղացին (փոխադր. Աթ. Խնկոյանի); Կոիլով Ի. Ճպուռն ու մրջյունը (փոխ. Աթ. Խնկոյանի); Խնկոյան Աթ. Ձմեռ; Սաբիր Մ. Ս. Դպրոցի ճամփան; Տղան և սառույցը (Թարգմ. Վեսպերի); Սարյան Գ. Մանուկն ու ձյունը; Մուրադյան Հ. Ջյուն; Ձմռան պատկեր; Գարուն; Դոդոխյան Գ. Մանուշակ¹; Աղայան Ղ. Առավոտը գյուղում; Թումանյան Հովհ. Կանաչ ախպեր; Արագի; Գարուն; Ծաղիկների երգը; Խնկոյան Աթ. Ծաղիկներ; Ծիծեռնակին; Բլուկ Ալ. Գարուն (Թարգմ. ուսնիրև-

¹ Գրքի ցանկում սխալմամբ «Մանուշակ» բանաստեղծությունը վերագրված է Ռ. Պատկանյանին:

ներց); Մայակովսկի Վ. Մայիսյան երգ (Թարգմ. Վեսպերի); Մե-
րեթելի Ակ. Գարուն (Թարգմ. Հ. Կարապետյան); Հակոբյան Հ.
Ես այն եմ սիրում: Հայրապետյան Հ. Գարուն; Սարյակի տունը;
Ծառատունկ; Ինչ սիրուն է; Ավդալ Ա. Ծիծեռնակ (Թարգմ. Վես-
պերի); Սաբիր Մ. Ս. Գարնան օրեր (Թարգմ. Վեսպերի); Սա-
րյան Գ. Ով եմ ես; Թումանյան Հովն. Մարտը; Ամառ; Աղբյուրը;
Գետակը; Աղայան Ղ. Ամառ; Հնձվորենքը; Տոլստոյ Ա. Զանգակ
ժաղիկներ; Այնտեղ, ուր որ գետակի վրա (Թարգմ. Հ. Հայրա-
պետյանի); Հայրապետյան Հ. Ամառ; Աղաբաբ Հ. Ամառը; Կո-
կովա Մ. Գնանք լողանանք (Թարգմ. Հ. Հայրապետյանի); Մա-
նուկյան Ս. Երգ խոտհարքի; Թումանյան Հովհ. Բզեզի դպրոցը;
Աշուն; Տերևաթափ; Աշնան վերջը; Պուշկին Ալ. Եվգենի Օնեգինից
(Թարգմ. Հռ. Պողոսյան); Շիլլեր Ֆ. Հովվի հրաժեշտը (Թարգմ.
Հովհ. Թումանյան); Հայրապետյան Հ. Շուկան աշնանը; Աշուն;
Աշնանը; Միտն ու ծիծեռնակը:

118 Բանվոր Ամիր: Աշխարհը շուռ եկավ: Պատմվածքներ.
[Միջին տարիքի համար].— Թիֆլիս, 1929.— 32 էջ: Մատենա-
գիտ. (Վրաստանի պրոլետ. գրողների ասոցացիայի հայկական
սեկցիա, № 8: Շապկի վրա հեղինակի համառոտ կենսագրու-
թյունը):

Բ ո վ ա ն դ.՝ Աշխարհը շուռ եկավ: Լենինի մոտ; Նարգիզը;
Մեծագիր պատկեր; 1905 թիվը; Երկու սեր; Բանվոր Ամիր (հա-
մառոտ կենսագրությունը և նկարը):

119 Բանվոր Գեվո (Օհանյան Գ.) Կյանքի հորձանքում:
Պատմվածքների ժողովածու: Հտ. 2. [Միջին տարիքի համար].
/Պատ. խմբ. Ռ. Լուսինյան.— Թիֆլիս, Սախելգամի, 1936.—
104 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Կյանքի հորձանքում; Սեթոյի αԳերմանականը»:

120 Բանվոր Գեվո (Ստեփունի): Նախօրյակին: Պատմվածք-
ների ժողովածու: Հտ. Ա. [Միջին և բարձր տարիքի համար].—
Թիֆլիս, Սախելգամի, 1931.— 166 էջ: Մատենագիտ. մամուլը
Բանվոր Գեվոյի ստեղծագործությունների մասին, էջ 167:

Բ ո վ ա ն դ.՝ Նախօրյակին; Լուսադեմին; Անպետք մարդը;
Պայքարում:

Դ ր ա խ ո ս .՝

Դ զ ն ու ն ի Դ.— Դրական դիրքերում, 1928, № 2.

Մ ե լ ո յ ա ն Գ.— Պրոլետար, 1930, № 264.

Վարդանյան Աղ.— Գրական արշավ, 1930, N 1.

121 Բես Գ. Պայքար. [Արձակ. կրտսեր տարիքի համար].
/Նկ. Ս. Ռասմաճյանի.— Ե.: Պետհրատ, 1932.— 16 էջ:

122 Բես Գ. Զորքի Տենլի. [Արձակ, միջին և բարձր տարիքի
համար].— Ե.: Պետհրատ, 1931.— 78 էջ:

123 Բոլշեիկյան հավաք. [Զափածո, միջին տարիքի հա-
մար].— Մ.: Կենտ. հրատ., 1930.— 31 էջ. (ՍՍՌՄ-ի ձեռք բե-
րած նվաճումները):

124 Բորյան Գ. Մանկական բանաստեղծություններ. [Նա-
խադարձական և կրտսեր տարիքի համար]. /Նկ. Ռ. Բեգրո-
սովի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ.
բաժին, 1942.— 14 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Իմ ձին, Իմ մայրիկը; Ծիտը; Քամին; Մուլլ փի-
սոն; Վարդանիկն ու անձրևը; Սուրիկի հաշիվը:

125 Գաբրիելյան Ռուբեն: Բնության մեջ. [Արձակ, կրտսեր
և միջին տարիքի համար]. /Նկ. Բ. Մազմանյանի.— Ե.: Հայ-
պետհրատ, 1945.— 124 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Մի տարօրինակ մայր: Անհաջող որս: Համերաշխ
ընտանիք: Վահանիկի ոգնին: Խլուրդ Տալպան և աղվես Սա-
նամը: Ճագարամուկը: Գիշերաշրջիկը: Թե ինչ գտան բակում:
Մողեսների աշխարհում: Լճի ափին: Բզեզների հետևից: Ով ինչ-
քան է ապրում:

126 Գաբրիելյան Ռ. Զրույցներ կենդանիների կյանքից. [Ար-
ձակ, կրտսեր և միջին տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ,
1945.— 66 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Հերոսը: Օվկիանոսի թագավորը: Սառուցյալ օվ-
կիանոսում: Շինարար կուղբը: Լեռպարդը: Մամոնտը: Սուխու-
միի կապկանոցը:

127 Գաբրիելյան Ռ. Իվան Միշուրին և Լուսեր Բերբանկ.
[Միջին և բարձր տարիքի համար].— /Խմբ. Ն. Խանջյան.— Ե.:
Պետհրատ, 1935.— 56 էջ: (Գիտատեխնիկական գրադարան
N 27—28.

Բ ո վ ա ն դ.՝ Նախաբան: Իվան Միշուրին [Կենսագրություն-
ներ]: Ինչ արեց Միշուրինը: Միշուրինի նվաճումները: Միշուրինի
կյանքը ըստ տարիների: Լուսեր Բերնբանկ: Բերնբանկի աշխա-
տանքի ձևերը: Ինչ արեց Բերնբանկը: Փորձեր ծառերի վրա:

128 Գաբրիելյան Ռ. Կյանքը և նրա ծագումը. [Արձակ, մի-

ջին և բարձր տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1926.— 44 էջ.

129 Գաբրիելյան Ռ. Հերոսը: (Պատմվածք ջալամի մասին). [Կրտսեր և միջին տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1924.— 23 էջ. (ՀՍԽՀ Պետհրատարակչություն № 12):

130 Գաբրիելյան Ռ. Հոտերի ահաբեկիչը: Զրույց առյուծի մասին: [Միջին տարիքի համար]. /Խմբ. Հ. Պետրոսյան: Նկ. Վ. Ախիկյան.— Ե.: Պետհրատ, 1936.— 51 էջ.

131 Գաբրիելյան Ռ. Ճագարամուկը: Բզեզների հետևից: (Բնագիտական զրույցներ): [Կրտսեր տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1927.— 28 էջ. Մատ. տեղեկ. (Պատանեկան գրադարան, բնագիտական մատենաշար № 7):

Բ ո վ ա ն դ.՝ Ճագարամուկը: Բզեզների հետևից: Բլապս; Սրբազան կոպրը:

132 Գաբրիելյան Ռ. Միջատակեր բույսեր: (Բուսաբանական զրույց). [Միջին տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1926.— 20 էջ. (Պատանեկան գրադ-ն, բնագիտական մատենաշար № 3):

Բ ո վ ա ն դ.՝ Միջատակեր բույսեր: Յողիկը: Սափորիկը: Ճանճակալը: Փամփշտիկը:

133 Գաբրիելյան Ռ. Մողեսների աշխարհում: (Կենդանաբանական զրույցներ). [Արձակ, միջին տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1927.— 28 էջ: Մատենագիտ. ցանկ: (Պատանեկան գրադ-ն, բնագիտական մատենաշար № 10):

Բ ո վ ա ն դ.՝ Սովորական մողես լացերտա: Գեկկո: Ագամա: Դևղնափորիկը:

134 Գաբրիելյան Ռ. Զարլզ Դարվին: (Կյանքը և գիտական հայտնագործությունները). [Արձակ, միջին և բարձր տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1925.— 36 էջ.

135 Գաբրիելյան Ռ. Չղջիկը: Կենդանաբանական զրույց. [Միջին և բարձր տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1930.— 24 էջ: (Պատանեկան գրադ-ն, բնագիտական մատենաշար № 22):

136 Գաբրիելյան Ռ. Օվկիանի թագավորը: Կետի մասին: Բնագիտական զրույց, 2-րդ հրատ. [Միջին տարիքի համար] .— Ե.: Պետհրատ, 1926.— 26 էջ: (Պատանեկան գրադ-ն, բնագիտական մատենաշար № 1):

137 Գալլ բարի, նոր տարի: [Ժողովածու. կրտսեր տարիքի համար]. /Կազմեց Ար. Թամազյան: Շապիկը Ան. Գասպարյա-

նի: Նկ. Ան. Մխիթարյանի, Մ. Բադասարյանի, Ա. Սարգսյանի, Հովհ. Շավարշի.— Ե.: Հայպետհրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1940.— 18 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Եիրազ Հ. Առաջին կենացը; Զամբուլ: Շնորհալոր նոր տարի; Հակոբյան Հ. Նոր տարին; Իսահակյան Ավ. Մի նոր տարվա դիմավորումը Փարիզում; Կասպյան Ռ. Նոր տարվան; Հայրապետյան Հ. Նոր տարի; Միրզյան Մ. Տոնածառ; Դավթյան Ա. Նոր տարի; Աղաբաբ Ռ. Երգ նոր տարվա; Աղայան Ղ. Նոր տարի:

138 Գալնյան Երվանդ: Ամենագիրքը (Պոեմ) [Բարձր տարիքի համար]. / Նկ. Վ. Լեբեդևայի.— Թիֆլիս, ՌԶԻԲ [1922].— 64 էջ.

139 Գալնյան Ե.: Բարդինների քաղաք: Վիպակ [Բարձր տարիքի համար]. / Պատ. խմբ. Հարուսթյուն Սուրխաթյան.— Թիֆլիս, 1936.— 108 էջ: Մատենագիտ. պատրաստ է տպագրության «Կապուտակ ջրերի ափին» պատմվածքների ժողովածուն:

Բ ո վ ա ն դ.՝ 1915 թ. թուրքական հրոսակներից Վան քաղաքի ինքնապաշտպանության մասին:

140 Գալնյան Ե. Երեք երգ. [Բարձր տարիքի համար].— Թիֆլիս, Պոլիգրաֆտրեստի 4-րդ տպարան, 1926.— 3 էջ: Գրքույկը հեղինակի ձեռագիր մականգրությամբ նվիրված էր Մատենադարանին:

Բ ո վ ա ն դ.՝ Առյուծի երթը (Հոկտեմբերին); Հանգիստը (Ռուս պրոլետարիատին); Քարհատները (հայ զարթոնքին):

141 Գալֆայան Վանան: Արփիկի երազը. [Կրտսեր և միջին տարիքի համար].— Ե.: «Հերմես» հրատ., 1926.— 30 էջ.

142 Գարնանային: Ժողովածու բանաստեղծությունների. [Բարձր տարիքի համար].— Գյանջա [Կիրովարադ], 1929.— 28 էջ: (Աղբբեջանի պրոլետգրողների աստղիացիա Գյանջայի հայկական սեկցիա):

Բ ո վ ա ն դ.՝ Առաֆելյան Գ. Դու մեր գարուն; Շոհլա; Կյանքը գարուն; Գյուղերում; Գալիս եմ Ավետ; Գնացքն է թռչում; Զուգվել են կանաչ; Մաթոյի դատը; Խոջայան Գ. Իմ ճամբեն; Կա մի խինդ; Երգերը մեր; Աշուղ; Օ՛, իմ ապի; Ցականյան Ցական; Գալիքին; Զուբեյդա; Ինձ դյուքել են; Աղիլյան Լ. Երկիր իմ; Գաբրիելյան Ա. Գեղջուկ ախպեր; Խաչ. Սոն. Սիրում եմ:

143 Գաբունց Գ. Հանքերում [Զափածո, կրտսեր տարիքի

համար]. /Նկ. Ս. Ռասմաճյանի.— Ե.: Պետհրատ, 1932.— 12 էջ:

144 Գաբունց Գ. Նվերը [Զափածո, կրտսեր տարիքի համար]. /Նկ. Հ. Շավարշի.— Ե.: Պետհրատ, 1932.— 10 էջ.

145 Գևորգյան Ս. Թռչող մուկը [Գիտահանրամատչելի զրույց միջին տարիքի համար]. /Խմբ. Ա. Հայրյան: Նկ. հեղինակ՝ Ս. Գևորգյանի.— Ե.: Պետհրատ, 1936.— 52 էջ:

146 Գիսակ [Հովհաննիսյան]. Ամբեն ու Ռամբեն: Հեքիաթ. [Կրտսեր տարիքի համար]. /Նկ. Նելլիի.— Ե.: Հայպետհրատ, 1936.— 12 էջ.

147 Գիսակ: Հինգ հեքիաթ [Կրտսեր տարիքի համար]. /Նկ. Սուլթանովի:— Թիֆլիս, Սախելգամի, 1936:— 30 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Ալյոշի կալոշները; Փուշիկը, Ցողունն ու տրեխը; Արջի ծառայություն; Ամբեն ու Ռամբեն; Ով ումից վախեցավ:

148 Գիսակ: Ուղղագրական ծոցատետր: (Գործնական): Ռտառի գործածությունը այբբենական կարգով գործածական բառերում. [Կրտսեր, միջին և բարձր տարիքի դպրոցականների համար]: Աշխատասիրեց Գ. Հովհաննիսյանը: Ստուգեց Ստ. Մալխասյանը: Թիֆլիս, Սախելգամի, 1933.— 30 էջ.

Բ ո վ ա ն դ.՝ Բացատրական; Ռտառի ուղղագրությունը [Առաջաբանում գրում է, որ Վրաստանի հայկական դպրոցների աշակերտությունը այս բառարանի կարգիչը խիստ զգում է]:

149 Գիսակ: Փոքրիկ էնտուզիաստները. [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Թիֆլիս, Սախելգամի, 1934.— 20 էջ. («Կարմիր ծիլեր» ամսագրի գրադարան):

Բ ո վ ա ն դ.՝ Լենին; Կարմիր զարթին; Պիոներ հավաք; Պիոներ արշավ; Աշխատավոր պարավոզ; Եկեք ինձ մոտ; Յոթ սավառնակ; Մայիսը վառ; Գարուն; Նորից գարուն; Ամառ; Ծամբաբային; Աշնանականչ; Ձմեռ պապի; Երգ ճամբարների մասին; Մարտական ընկեր; Գրաշարի երգը; Թե ինչպես ես թարգմանիչ դարձա; Փոքրիկ էնտուզիաստները:

150 Գյուլնազարյան Խաթակ: Ծուլի վերջը. [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Ե.: Հայպետհրատ, 1940.— 8 էջ. Գրքի չապկի վրա հեղինակ՝ Խաթակ.

151 Գյուլնազարյան Խ. Չար բազեի մահը [Զափածո, կրտսեր տարիքի համար]. /Նկ. Ան. Գասպարյանի.— Ե.: Հայպետ-

հրատ, ՀԼԿԵՄ ԿԿ կից մանկապատ. գրակ. բաժին, 1938.— 14 էջ.

152 Գլուպատնոսոթյան համատարած կոլեկտիվիզացիա և աշխատանքային պրոցի դերը. [Արձակ, բարձր տարիքի համար].— Թիֆլիս, 1930.— 29 էջ: (Վրաստանի լուսժողովոմատի սոց. դաժտիարակ. բաժին):

153 Գրական-գեղարվեստական ժողովածու. [Միջին և բարձր տարիքի համար].— Թիֆլիս, Հայաստան հրատ., 1927.— 141 էջ. (Վրաստանի հայ գողների միություն):

Բ ո վ ա ն դ.՝ Երկու խոսք (ժողովածուի մասին), Հակոբյան Հ. Քննադատ; Արազի Մ. Անխուսափելին; Թուրքմյան Մ. Հորձանքում; Մարգար: Ինգիլի բարեկամները; Բահաբուր Ե. Մուկուլը; Թերզիբաշյան Վ. էվազիդի վերջին արկածները; Մեսյեա Գ. Վասիլ աղան; Գալևյան Ե. Ծիրո; Վարդանյան Աղ. Հանգրստի հրգեր; Մելոյան Գ. Մեմո; Վեսպեր: Բաց նամակ բարեկամիս; Շիրակի դաշտերով; Պողոսյան Հո: Քաղաքը; Քաղաքում, Գրիգ Գ. «Բաքու» շարքից; Պահարե: Հրազդան:

154 Գրիգ Գ. Գլուպացին ու գայլը: (Հերիաթ): [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Թիֆլիս, Սախելգամի, 1927.— 15 էջ:

155 Գրիգ Գ. Երկաթի երգը. [Զափածո, կրտսեր տարիքի համար].— Թիֆլիս, Սախելգամի, 1925.— 16 էջ (Հայ պրոլետ. գրողների ասոցիացիա № 1):

Բ ո վ ա ն դ.՝ Երկաթի երգը; Կամերիտականներին; Զեմո Ալ-ճալա; Գնացք; Նամակ; Զա՛րկ, վարպետ; Մրրիկ:

